Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ II) 2019-2022թթ.

Տարածաշրջանային ծրագիր՝ Կանանց համար արդարադատության մատչելիություն՝ Ստամբուլյան կոնվենցիայի և գենդերային հավասարության եվրոպական այլ չափանիշների պահպանում

Ո՞րն է ծրագրի նպատակը

- Ամրապնդել կանաց համար արդարադատության մատչելիությունը, հատկապես, բռնության զոհ դարձած կանանց համար, Եվրոպայի խորհրդի Ստամբուլյան կոնվենցիայի պահանջներին համապատասխան և նպաստելով Արևելյան գործընկերության երկրներում Ստամբուլյան կոնվենցիայի վավերացմանը:

Ովքե՞ր են ծրագրի շահառուները

- Լայն հասարակությունը:
- Բռնության զոհ դարձած կանայք:
- Դատավորները, դատախազները, իրավաբանները և քաղաքացիական հասարակության իրավապաշտպանները:
- Կանանց նկատմամբ բռնության խնդիրներով զբաղվող իրավական ոլորտի մասնագետները:

Ինչպե՞ս է իրականացվում ծրագիրը

- Ներպետական իշխանությունների հետ երկկողմանի աշխատանքի և տարածաշրջանում փորձի փոխանակման միջոցով:
- Դատավորների և դատախազների համար մենթորական ծրագրերի մշակում կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ, ինչպես նաև իրավաբանների համար վերապատրաստման ծրագրեր Արևելյան գործընկերության բոլոր վեց երկրներում:
- Գենդերային ասպեկտների ներառում իրավաբանական դպրոցների ուսումնական ծրագրերում Արևելյան գործընկերության բոլոր վեց երկրներում:

Ի՞նչ արդյունք ենք ակնկալում

- Իշխանությունները, արդարադատության ոլորտի մասնագետները և քաղաքացիական հասարակությունը կիրառում են Ստամբուլյան կոնվենցիայի՝ արդարադատության մատչելիության չափանիշների հետ կապված նոր իրավասությունները՝ արդարադատության մատչելիության խոչընդոտների վերացման նպատակով:
- Իշխանությունները, արդարադատության ոլորտի մասնագետները և քաղաքացիական հասարակությունը ներդնում են միջոցներ, այդ թվում նաև ուսումնական՝ ապահովելու, որ արդարադատության շղթան հաշվի առնի գենդերային ասպեկտները, մասնավորապես, բռնության զոհ դարձած կանանց համար՝

- Ներպետական իշխանությունների կարողությունների ամրապնդում՝ Արևելյան գործընկերության բոլոր վեց երկրներում կանանց համար արդարադատության մատչելիության գնահատման նպատակով:

Ստամբուլյան կոնվենցիային և եվրոպական այլ չափանիշներին համապատասխան:

Որքա՞ն է ծրագրի արժեքը

- Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1 071 000 եվրո:
- Ծրագիրը 80%-ով ֆինանսավորվում է ԵՄ-ի և 20%-ով՝ Եվրոպայի խորհրդի կողմից: Ծրագիրն իրականացնում է Եվրոպայի խորհուրդը:

Որքա՞ն է ծրագրի տևողությունը

- Ծրագրի տևողությունն է 2019 թվականի հունվարից մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ը:

Ինչպե՞ս ստանալ հավելյալ տեղեկություններ

- Գենդերային հավասարության բաժին, Կարողությունների զարգացման և համագործակցության ծրագրերի բաժանմունք, Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության հարցերով 2-րդ գլխավոր տնօրինություն:

Կոնտակտային տվյալներ

Ծրագրի թիմ Ստրասբուրգում

- Մարթա Բեկերրա, Բաժնի ղեկավար marta.becerra@coe.int
- Անկա Սանդեսկու, ծրագրի համակարգող, anca.sandescu@coe.int

Սա տարածաշրջանային ծրագիր է, որում ընդգրկված են Արևելյան գործընկերության երկրները (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա և Բելառուս[1]) և որն իրականացվում է «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում (2-րդ փուլ կամ ԳԼԿ II):

2014 թվականի ապրիլին Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համաձայնել են, որ թիրախային համագործակցության միջոցառումները ԵՄ Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի հետ կիրականացվեն «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում:

[1] *Ելնելով Բելառուսում քաղաքական իրավիճակից և Եվրամիության կողմից ընդունված սահմանափակող միջոցառումներին համապատասխան՝ այս երկրի հետ համագործակցությունը դադարեցված է, և մինչ այժմ ԳԼԿ II-ի իրականացման մնացած ժամանակահատվածի համար նոր գործողություններ չեն նախատեսվում:*

Ծրագրի I փուլը (ԳԼԿ I) սկսվել է 2015 թվականին և ավարտվել 2018 թվականին, իսկ երկրորդ փուլը (ԳԼԿ II)՝ մեկնարկել է 2019 թվականին և կտևի մինչև 2022 թվականի օգոստոսը։

Համագործակցության այս միջոցառումները կհզորացնեն Արևելյան գործընկերության երկրների կարողությունները, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ են, բացառությամբ Բելառուսի՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության ոլորտներում եվրոպական չափանիշներին ավելի սերտ հաղորդակից դարձնելուն միտված ներպետական բարեփոխումներ իրականացնելու նպատակով։